

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԻՋԱ ԷՐԵՆՐՈՒՐԳԻ ՀԵՏ

Գ. Ն. ՀՈՎՆԱՆ

Րանսափրակսն զխառնությունն զոկտոբ

Խիստ տարբերվում էր Իլլյա Էրենբուրգն իմ տեսած բոլոր խոշոր գրողներից: 'Նա բազմակողմանի զարգացած և բարձր կուլտուրայի տեր գրող էր, խոսակցության մեջ՝ հանգիստ ու զուսպ: Գրողների ժողովներին ու հավաքություններին քիչ էր խոսում, բայց զարմանալի գրուցակից էր, ժամերով կարելի էր լսել նրան ու ոչ միայն չճոգնել, այլ անսահման հաճույք զգալ: Շատ հետաքրքիր ու ուշագրավ անձնավորություն էր նա. Արտաքուստ քիչ չոր էր, թվում էր անմատչելի, բայց երբ մոտիկից ծանոթանում էիր, զգում էիր նրա ամբողջ հմայքը: Հետաքրքիր պատմություններ էր անում գրողների, արվեստագետների, գիտնականների կյանքից:

1930—1934 թթ. ընթացքում բազմիցս հանդիպել եմ նրան, առիթ է եղել ծանոթանալու, ոտքի վրա գրուցելու, բայց ճակատագիրը մեզ բարեկամներ դարձրեց միայն Հայրենական պատերազմի ծանր օրերին, ռազմաճակատում, ապա պատերազմից հետո, Մոսկվայում և Երևանում ունեցած հանդիպումների ժամանակ:

Պատերազմի տարիներին, տարբեր ռազմաճակատներում իմ խմբագրությամբ հրատարակված ռուսերեն ու հայերեն թերթերում «За правое дело», «Հայկական սնայպեր», «Մարտ հանում հայրենիքի», «Боевая жизнь», տպագրվել են Էրենբուրգի տասնյակ հոդվածներն ու ակնարկները հայերեն և ռուսերեն: Շատ հոդվածներ ինքս եմ թարգմանել: Առանձին թողնակներով հրատարակվել են նրա կրակոտ կոչերը գերմանական ֆաշիստների հրեշավոր արարքների դեմ:

Բայց ռազմաճակատում Էրենբուրգին հանդիպելու ու նրա հետ բարեկամանալու բախտ ունեցա միայն պատերազմի վերջին ամիսներին, Գերմանիայում, Արևելյան Պրուսիայի Էլբինգ քաղաքում, 1945 թ. փետրվար ամսին:

Երեկոյան ուշ ժամ էր, նոր էի վերադարձել մարտեր մղող ստորաբաժանումներից, երբ դուռը ծեծեց ու ներս մտավ շտաբի սպաներից մեկը և հայտնեց, որ հրամանատարը կանչում է ինձ:

— Ինչ կու,— հարցրի ես լուռ դժգոհությամբ:

— Չգիտեմ ընկեր մայոր:

Քիչ լռելուց հետո սուսը.

— Մոսկվայից գրողներ են եկել, գուցե դրա համար են Ձեզ կանչոմ:

— Ինչ գրողներ:

— Ահիտեմ, ասում են հայտնի գրողներ:

Արագ, ինչպես ընդունված է բանակում, մեկնեցի դեպի շտաբ:

Հրամանատարի սենյակում երկու հոգի կային, երկուսն էլ զինվորական հագուստով: Մեկը, որ ուղիղ դիմացիս էր նստած՝ անծանոթ էր, մյուսը նստած էր թեք ու դժվար էր իմանալ նրա ով լինելը:

— Եկաք մայոր,— ասաց հրամանատարը, — գլուխը բարձրացնելով: Գիտե՞ք ովքեր են մեր հյուրերը, դե ծանոթացեք:

Դիմացի սպան մեկնեց ինձ ձեռքը:

— Միխայիլ Բրազին:

Նստած սպան, թեթև բարձրացավ տեղից, հանգիստ մեկնեց ինձ ձեռքը ու հազիվ լսելի ձայնով սուսը.

— Իլյա Էրենբուրգ:

Ես շփոթվեցի ու չէի հավատում աչքերիս:

— Շատ, շատ ուրախ եմ տեսնելու Ձեզ:

— Օնորհակալություն,— ասաց նա դարձյալ ցածր ձայնով:

— Մենք ծանոթ ենք,— ասացի ես Էրենբուրգին,— Մոսկվայի գրողների տանը շատ եմ տեսել Ձեզ, բայց առաջին հայացքից չճանաչեցի, այնքան անսպասելի էր Ձեզ այստեղ տեսնելը, զինվորական շորերով:

— Պատերազմի ժամանակ անակնկալներ շատ եմ լինում,— ասաց Միխայիլ Բրագինը:

Էրենբուրգը լուռ էր:

Հագիվ մի քանի խոսք էինք փոխանակել հյուրերի հետ, երբ հրամանատարը դարձավ ինձ.

— Մայր, վաղը դուք կլինեք ընկերներ Էրենբուրգի ու Բրագինի հետ, ծրագրի մասին ձեզ կհայտնեն քաղբաժնում:

— Լավ, ընկեր հրամանատար:

Առավոտյան ես շատ շուտ արթնացա: Հյուրերը դեռ քնած էին: Ես շատ զգուշությամբ հագնվեցի ու դուրս եկա: Փոքրիկ գործեր ունեի, վերջացրի ու վերադարձա:

Ժամն արդեն 9-ն էր: Բոլորն արթնացել ու հագնվել էին: Արագ նախաճաշեցինք ու դուրս եկանք քաղաք: Քիչ գրոսնելուց հետո գնացինք բանակի քսուբաժին:

Ըստ պայմանավորվածության՝ Միխայիլ Բրագինը մի կապիտանի հետ չեմ հիշում ուր գնացին: Ես և Էրենբուրգը գնացինք քաղաքի ծայրում գտնվող գերմանական նշանավոր դղյակներից մեկը: Այդտեղ, տարբեր ժամանակներ ապրել էին շատ անվանի մարդիկ՝ գրողներ, արվեստագետներ, պետական գործիչներ: Պատերազմի տարիներին այդտեղ ապրել են հիտլերյան բանակի բարձրաստիճան հրամանատարներ:

Էրենբուրգը մեծ ուշադրությամբ դիտեց գեղեցիկ դղյակը: Կենտրոնական շենքը մասամբ տուժել էր օդային ուժերի ռմբակոծումից. Մեծ հարստություն կար շենքի ներսում, թանկարժեք նկարներ, քանդակներ, հին ու գեղեցիկ ապակեղեն, կահույք և ուրիշ շատ հնություններ:

— Պետք է հսկել, որ ձեռք չտան սյդ նկարներին և մյուս իրերին, դրանք պատմական մեծ արժեքներ են,— ասաց Էրենբուրգը մեզ ուղեկցող սպային:

Հարուստ և հագվագյուտ գրականություն կար երկու սենյակում: Էրենբուրգը բավական երկար մայեց այդ գրքերը, ալբոմները և զանազան փորագրված զարդանկարները:

Գրապահարաններից մեկում ես տեսա գերմանական կլասիկների գործերի փոքր ծավալով, լուցկուց քիչ մեծ, արտակարգ շքեղ հրատարակություններ: Ահա Հ. Հայնեի «Երգերի գիրքը»: Հայնեն իմ սիրելի բանաստեղծն է: Զարմանալի է, հիշեցի, թե ինչպես մինչև պատերազմը ես երագում էի Հայնեի մասին գիրք գրել և չեմ թաքցնի, մտածում էի, որ եթե կենդանի մնամ անպատճառ պիտի գրեմ այդ գիրքը: Նույն ծավալով կային նաև Գյոթեի և Շիլլերի բանաստեղծությունների ժողովածուները: Գյոթեի ժողովածուն վերցրի ու տվեցի Էրենբուրգին:

— Տեսեք ինչ հրատարակություն է, ես երբեք չեմ տեսել այդպիսի հրատարակություններ:

— Ես տեսել եմ, բայց սա իսկապես շատ լավն է,— ասաց Էրենբուրգը, հաճույքով թերթելով գիրքը: Ապա ինքը նույնպես մոտեցավ այդ պահարանին ու մի առ մի մայեց գրքերը:

— Զարմանալի է,— ասաց նա հեռանալով պահարանից,— ուղղակի անբացատ-

րելի, թե ինչպես կարող է, այսպիսի սի մեծատաղանդ ժողովուրդ, որ տվել է Գյութեն, Շիլլեր, Բեթհովեն, թույլատրի, որ այսպիսի հրկշավոր ավերումներ կատարեն մացիստները, այսքան վիշտ, այսքան ցավ պատճառեն մարդկությանը:

Շենքից դուրս գալով՝ մենք բավական զբոսնեցինք դղյակի գեղեցիկ զբոսայգում: Զրույցի ժամանակ Էրենբուրգը պատմեց, որ տարբեր ռազմաճակատներում շատ հայերի է հանդիպել, որ հայ ժողովուրդը շատ հերոս գավակներ է տվել, որ մրահիչ շատերի հետ բարեկամական կապեր ունի ինքը:

— Եղե՛լ եք Հայաստանում, — հարցրի ես:

— Ոչ, չեմ եղել, գիտեմ կվարմանաք, բայց ես ինքս էլ չգիտեմ, թե ինչպես է պատահել, որ մինչև հիմա չեմ եղել Հայաստանում: Բայց ես հայ բարեկամներ շատ ունեմ Սոսկվայում, արտասահմանում և Հայաստանում: Նրանք ինչ շատ են ասել Հայաստան գալու մասին, բայց չգիտեմ ինչու չստացվեց, անվերջ ուղևորություններ, հոգսեր և այդպես չկարողացա մինչև պատերազմը գալ Հայաստան, բայց խոսք հիմա լինի պատերազմից հետո անպատճառ գալ Հայաստան:

— Եկեք, այնտեղ Ձեզ շատ լավ գիտեն և սիրում են, Ձեր շատ գործեր թարգմանված են հայերեն, կարդում, վիճում են Ձեր ստեղծագործությունների շուրջը, հետո կտեսնեք բիբլիական Արարատը, կապույտ ու գեղեցիկ Սևանը:

— Դուք իրավացի եք, ես անպայման կգամ Հայաստան:

Այդ օրը շատ անցկատելի անցավ: Մեքենայով, ոտքով շատ տեղեր գնացինք: Էրենբուրգը հանդիպումներ ու զրույցներ ունեցավ զորամասի շատ մարդկանց հետ, իսկ երեկոյան դիմաց գնացինք գերմանական գերիների մոտ: Էրենբուրգը երկուս զրույց ունեցավ գերմանական մի սպայի հետ, որը մախկնում լրագրող, թերթի խմբագիր էր եղել:

Ընթրիքի ժամանակ ինձ կանչեցին և հայտնեցին, որ քաղաքաժնի երկու այլ սպանների հետ շտապ պիտի մեկնենք Դանցիգ: Ես հագիվ հասցրի Էրենբուրգին ցտեսություն ասել:

— Սոսկվա լինելուց անցեք ինձ մոտ, — ասաց Էրենբուրգը:

— Եթե սաղ մնամ սիրով, եթե սպանեն, ինչպես ասում են, համարեք հարգելի:

Պատերազմը վերջացել էր: Մեր զորամասը դեռ պիտի մնար Գերմանիայում: Մենք տեղավորվել էինք Լեռլինգի դեպի հյուսիս մի քանի կիլոմետրի վրա գտնվող մի բնակավայրում, ուր ամբողջովին ամառանոցային տնակներ էին: Հաճախ գնում էինք Բեռլին:

Խուս և օտար գրողների շատ եմ հանդիպել Բեռլինում, հարցրել եմ Էրենբուրգի մասին, բայց մրանք թարմ լուրեր չունեին: Ժուկովի շտաբի սպաններից մեկը զրույցի ժամանակ ինձ ասաց, որ Էրենբուրգը եղել է Բեռլինում, նույնիսկ գրել է այդ մասին թերթերում: Բայց ես չեմ կարդացել թերթերի այդ համարները:

Պատերազմից հետո ժամանակն անցկատելի կերպով անցավ, և ինձ թվում էր Էրենբուրգն արդեն մոռացած կլիներ մեր ռազմաճակատի հանդիպումը:

1958 թ. գրականության ինստիտուտը տպագրության էր պատրաստում Եղիշե Չարենցի երկերի ակադեմիական հրատարակությունը: Անհրաժեշտ եղավ դիմելու ման ռուս մի շարք ակադեմիկոս գրողների, խմբելով, որ մրանք գրեն իրենց հուշերը Չարենցի մասին և եթե իրենց մոտ մնացել են Չարենցի մամուլները, ձեռագրերը տրամադրեն ինստիտուտին:

Իմանալով Իլյա Էրենբուրգի՝ հալ մշակույթի, գրողների, արվեստագետների, հատկապես Չարենցի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի մասին,

նույն խնդրանքով դիմեցինք նաև նրան: Շուտով նրանից ստացվեց հետևյալ պատասխանը.

Մոսկվա, 6 օգոստոսի 1958

Հարգելի ընկեր Հովհան.

Ես ստացա Ձեր մամակը, ինչպես և ընկեր Ջաքարյանի մամակը, որ ինձ չէր գտել տանը: Այն քիչ բանը, որ ես հիշում էի Չարենցի հետ ունեցած իմ կարճ հանդիպումներից, որ ինձ վրա թողել է խոր տպավորություն, ես շարադրել եմ փոքրիկ թղթակցության մեջ: Չեմ հանդգնում ինչ որ ավելի ծավալուն բան գրելու:

Շատ ցավում եմ, որ չեմ կարող կատարել Ձեր խնդրանքը:

Հարգանքներով՝ Ի. Էրենբուրգ

Շատ ափսոսացիմք, որ Էրենբուրգը ավելի ընդարձակ բան չէր կարող գրել, քան այն փոքրիկ հոդվածը, որ արդեն տպագրվել էր մամուլում: Ես որոշել էի, այնուամենայնիվ, Մոսկվայում լինելուց, գնալ նրա մոտ և առիթի դեպքում խոսել այդ մասին:

Այդպես էլ եղավ: Հենց նույն՝ 1958 թ. սեպտեմբերին ես Մոսկվայում էի: Հյուրանոցից զանգեցի Էրենբուրգին, պայմանավորվեցիմք հանդիպել:

Ես շատ ուրախացա, որ պիտի տեսնեմ Էրենբուրգին: Հաջորդ օրը ժամը 7 անց 50 րոպեին ես արդեն մեծ գրողի տանն էի: Դուռը բացեց Իլյա Գրիգորևիչը: Նա զմեռող հայացքով նայեց, բայց ինձ թվաց, որ չհիշեց:

— Եթե զիմվորական հագուստով լինեիք, հավանորեն կվերհիշեի:

— Օ՛հ, մի ասեք այդ, ես երբեք չէի ցանկանա մորից զիմվորական շորեր հագնել:

— Դուք ինձ սխալ հասկացաք, ես ուզում եմ ասել իմ հիշողության մեջ դուք տպավորվել եք զիմվորական հագուստով:

Սեղանի շուրջը նստելուց հետո, Էրենբուրգը հանգիստ, ցածր ձայնով դարձավ ինձ.

— Դե ասեք, ի՞նչ եք անում, ե՛րբ եք եկել Մոսկվա:

— Երկրորդ օրն է, ինչ Մոսկվայումն եմ, Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում կարևոր խորհրդակցության եմ եկել:

— Ինչ գործ ունեք նրանց հետ:

Ես պատմեցի Էրենբուրգին, որ աշխատում եմ այդ գծով: Երբ Էրենբուրգը իմացավ, որ ես Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի դիրեկտորն եմ, ուշադրությամբ նայեց ինձ ու ասաց.

— Սպասեք, վերջերս այդ դուք եք պաշտոնական գրությամբ դիմել ինձ, որ ես հուշեր գրեմ Չարենցի մասին:

— Այո:

— Ահա թե ինչ:

Ես պատմեցի, որ պատրաստում եմք Չարենցի երկերի ակադեմիական հրատարակությունը և հուշերի հատոր նրա մասին:

— Գիտեք,— ասաց Էրենբուրգը,— ինչպես ձեզ գրել էի, իմ հանդիպումները Չարենցի հետ շատ չեմ եղել: Նա գրողների առաջին համագումարի օրերին անվերջ շրջապատված էր բանաստեղծներով և առիթ չկար մոտիկից զրուցելու: Մի օր միայն, երեկոյան հանդիպեցի նրան Պաստերնակի մոտ, ոտքի վրա քիչ զրուցեցիմք, ուրիշ գրողներ ևս կային և այդպես տպավորությունն ընդհանուր էր: Հիշում եմ անհան-

գիստ, կրքոտ վիճում էին պոեզիայի մասին, այնքան կրքոտ, որ կարծես բանական շտաբում լինեին և հարձակման պլան էին մշակում:

Ես լուռ ու ուշադիր լսում էի Էրեմբուրգին, նա մի պահ լռեց, շարունակեց ծխել. ապա նորից դարձավ ինձ.

— Ես, իհարկե, կարող էի ավելի գրել, բայց այնպիսի գրող, ինչպիսին Չալսենցն է, նրա մասին հուշեր գրելիս պետք է շատ զգույշ լինել, պետք է վախենալ անստույգ լինելուց, փոքրիկ անճշտություն և դա կվնասի գեղեցիկ միտումին:

— Այո, բայց Ձեր խոսքը շատ թանկ է մեզ համար և եթե Չալսենցի մասին է եռուկի թանկ է դառնում այն:

— Ես Ձեզ հասկանում եմ, բայց հիմա անհրաժեշտ է առաջին հերթին ռուս ընթերցողներին լավ թարգմանություններով ներկայացնել Չալսենցին: Դա շատ կարևոր է: Նրա մասին շատ են խոսում, գրում: Նրա անունն ավելի հայտնի է ռուս իրականության մեջ, քան նրա երկերը, բայց պետք է հակառակը լինի:

Ես ասացի, որ ռուս բանաստեղծները թարգմանում են նրան, տեսնենք ինչ կստացվի:

Մեր գրույցն աննկատելիորեն փոխվեց: Էրեմբուրգը պատմեց, որ նա նոր է եկել Փարիզից, որ գնացել էր Ֆրեդրիկ Ժուլիո-Կյուրիի թաղմանը: Կյուրիի կյանքի մասին պատմեց մեծ վշտով, կարծես հարազատի կորստի մասին էր խոսում:

— Գիտե՞ք, նա շատ սիրված անձնավորություն էր, ամենուրեք սիրում էին նրան, սիրում իսկական ու մեծ սիրով, իսկ սերն ավելի դժվար է նվաճել քան ցանկացած պատվավոր կոչումը, քան ցանկացած մրցանակը, քան նույնիսկ ակադեմիական սուսերը: Իսկական սերը դա ազնիվ վաստակի, լուռ ու բարձր գնահատական է:

Էրեմբուրգն ապա պատմեց, որ ինքը քաղաքական գրականության պետական հրատարակչության պատվերով գրքույկ է գրում Ֆրեդրիկ Ժուլիո-Կյուրիի մասին, որ շուտով այն կտպագրվի:

— Եթե մատչելի լեզվով եք գրել, ես այն սիրով կթարգմանեմ հայերեն:

— Այո, ես այն գրել եմ ընթերցողների լայն շրջանների համար, որ կարդան, ճանաչեն նրան:

Ոտքի ելնելով՝ ես նայեցի Էրեմբուրգի գրադարանը, տեսա նրա երկերի թարգմանություններն աշխարհի շատ լեզուներով:

— Իսկ ուր են հայերեն թարգմանությունները, — հարցրի ես:

— Հայերեն թարգմանություններն ինձ մոտ քիչ են...

— Ես Ձեզ կուղարկեմ Ձեր երկերի հայերեն թարգմանությունների լրիվ մատենագիտությունը, ապա նաև առանձին հրատարակությունները, ինչ կարողանամ ճարել:

Բաժանվելու ժամանակ ես հարցրի Իլյա Գրիգորեիչին, թե երբ է գալու Հայաստան:

Էրեմբուրգը ժպտաց:

— Ծուտով, շուտով:

Երևան վերադառնալուց հետո ես դիմեցի գրադարանների ռեդակցիային, նայեցի զանազան մատենագիտական հրատարակություններ և շուտով՝ ինձ մոտ արդեն պատրաստ էր Էրեմբուրգի երկերի հայերեն թարգմանությունների առանձին հրատարակությունների ցանկը և ես այն ուղարկեցի հեղինակին: Նամակում գրեցի, որ նա հայտնի, թե այդ թարգմանություններից որը չունի ինքը, որ գտնենք ուղարկենք: Մի քանի օր անց՝ ես Էրեմբուրգից ստացա հետևյալ նամակը.

Մոսկվա, 19 նոյեմբերի 1955

Միքելի Գուրգեն Ներսեսովիչ.

Ես ստացա Ձեր մամակը և շատ զգացված եմ ուշադրության համար: Իմ երկերի հայերեն թարգմանությունների Ձեր թվարկած առանձին հրատարակություններից ես ունեմ միայն «Փարիզի անկումը», «Փոթորիկը» և «Իններորդ ալիքը» վեպերը:

Ես շատ շնորհակալ կլինեմ, եթե Ձեզ հաջողվի գտնել և ուղարկել ինձ մյուս առանձին հրատարակությունները:

Ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիքներ:

Ի. Էրենբուրգ

Ես գիտեի, որ աշխարհի բոլոր կողմերից Էրենբուրգին հյուր են գալիս և բերում մրա երկերի թարգմանությունները տարբեր լեզուներով և ես ուզում էի, որ հայերեն թարգմանությունները մրա գրադարանում իրենց պատվավոր տեղն ունենան: Ուստի դիմեցի բուկինիստներին և առանձին անձանց, որ գտնեն ինձ համար Էրենբուրգի երկերի հայերեն թարգմանությունների հին հրատարակություններ:

Ծուտով ես ձեռք բերեցի Էրենբուրգի ավելի քան յոթ անուն գիրք, այդ թվում՝ մահ 1926 թ. Երևանում հրատարակված «Կոմունարի ծխամորճը» սքանչելի մովելը:

Այդ գրքերն ուղարկեցի հեղինակին: Չանցած մի քանի օր՝ մրանից ստացա հետևյալ երկտողը.

Մոսկվա, 28 մարտի, 1959

Հարգելի Գուրգեն Ներսեսովիչ.

Ես ստացա Ձեր ուղարկած գրքերը և սրտանց շնորհակալ եմ Ձեր ուշադրության ու սիրալիրության համար:

Սրտանց ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիքներ:

Ի. Էրենբուրգ

Առավոտյան թերթերը մայելիս մոր լույս տեսած գրքերի ցանկում նկատեցի՝ Իլյա Էրենբուրգ «Ֆրեդրիկ Ժոլիո-Կյուրի»: Ուրախացա: Հենց մույն օրը գնացի գրախանութները, բայց գիրքը դեռ չէր ստացվել: Խնդրեցի, որ ստանալուց ինձ համար ամպատնառ պահեն: Մի քանի օրից ինձ զանգեցին, որ գիրքը ստացվել է: Ես իսկույն գնացի վերցրի ու հենց մույն երեկոյան կարդացի: Այն գրված էր Էրենբուրգյան տաղանդի լայն ու անկաշկանդ փայլով, դիպուկ ընդհանրացումներով: Այն միաժամանակ պարզ էր, մատչելի, իսկապես, որ գրված էր ընթերցողների լայն շրջանների համար: Առանց հրատարակչության հետ պայմանավորվելու ես սկսեցի թարգմանել: Թարգմանության ժամանակ տեսա, որ այն այնքան էլ պարզ չէ, որքան ինձ թվում էր ընթերցման ժամանակ: Բայց, անկեղծ ասած, ես այդ աշխատանքը կատարեցի մեծագույն հանգիստով:

Երբ ավարտեցի, ձեռագիրը ուսերեն բնագրի հետ տարա «Հայպետհրատ» և հանձնեցի քաղաքական բաժին: Մի քանի օրից ինձ կանչեցին հրատարակչություն և խմբագրի հետ վերջին անգամ մայելուց հետո այն տպագրության հանձնվեց, որոշվեց պահպանել ուսերեն հրատարակության ձևավորումը: Գրքի շապկի վրա Ժոլիո-Կյուրիի նկարն էր և երկու կողմից՝ կապույտ ժապավեն:

Էրենբուրգի «Ֆրեդրիկ Ժոլիո-Կյուրի» գրքուկը լույս տեսավ 1959 թ. օգոստոսի վերջին, իսկ սեպտեմբերի սկզբին Մարտիրոս Սարյանի հրավերով Իլյա Էրենբուրգը իր կնոջ՝ Լյուբով Միխայլովնայի հետ ժամանեցին Երևան:

Էրենթուրգը շատ մոտ էր Սարյանների ընտանիքին: Անկեղծ կերպով նա սիրում ու բարձր էր դասում Սարյանի արվեստը: Հայտնի է, որ Սարյանի մասին շատ է զորվել, բայց ինձ թվում է, որ Էրենթուրգի հոգվածները, անգամ նրա առանձին ասույթները շատ ավելի բարձր են, դիպուկ, խորաթափանց:

Երբ Սարիկ Սարյանն ինձ զանգեց Էրենթուրգի ժամանելու մասին և խնդրեց անցնել իրենց մոտ, ես շատ ուրախացա, որ Էրենթուրգը Երևան է ժամանել Սարյանի հրավերով:

Ես իսկույն շտապեցի Սարյանների տունը:

Մարտիրոս Սարյանն ինձ ներկայացրեց Էրենթուրգին:

Նա ժպտաց:

— Կարծես մենք ծանոթ ենք:

— Այո, ծանոթ եսք, Իլյա Գրիգորիկի:

Ու մենք ջերմորեն սեղմեցինք իրար ձեռք:

— Իսկ ես, տեսեք, ինչպիսի նվեր եմ բերել Ձեզ,— ասացի ես՝ Էրենթուրգին մեկնելով «Ժրեդրիկ Ժուլիո-Կյուրիի» մասին գրքուկի հայերեն օրինակը:

— Ինչպես, թարգմանել, հրատարակել եք այդպես շուտ, իսկ ինչու ինձ չեք ուղարկել:

— Հենց նոր է լույս տեսել Իլյա Գրիգորիկի, ընդամենը մի շաբաթ է, հաճելի է, որ գրքի հրատարակումը համընկավ Ձեր Երևան գալու:

— Այո, ես շատ եմ ուզում, որ այս գրքուկը լայն տարածում ունենա, Ժուլիո-Կյուրիին բացառիկ անձնավորություն էր, բոլոր ժողովուրդները պետք է նրան իմանան և սիրեն:

Էրենթուրգը թերթեց գրքուկը:

— Ինչքան է տպաքանակը:

— Յոթ հազար:

— Լավ է:

— Մեզ մոտ դա մեծ տպաքանակ է,— ասաց Սարիկ Սարյանը:

Գրքուկից ես բերել էի հինգ օրինակ: Մի օրինակ նա նվիրեց Սարյանին: Իմ օրինակի վրա գրեց՝ «Գուրգեն Հովհաննիսյան» երախտագիտությամբ: Իլյա Էրենթուրգ, Երևան, 1959 թ. »:

Այդ ժամանակ մեզ անվերջ լուսանկարում էին: Ես մի կողմ էի քաշվել ու գրուցում էի Սարիկ Սարյանի հետ: Արագ կերպով մեզ մոտեցավ մի երիտասարդ աղջիկ և ասաց, որ Էրենթուրգն ինձ կանչում է: Ես իսկույն գնացի:

— Բարեկամս,— ասաց նա,— ես ձեզ պիտի խնդրեմ, որ այս գրքուկից երկու օրինակ ուղարկեք Փարիզ՝ Ժուլիո-Կյուրիի դասերը՝ Էլեն Կյուրիին: Նրանք շատ ուրախ կլինեն այդ ուշադրության համար: Նա ամուսնացած է և նրա ազգանունը հիմա Լանժելվեն է: Տվեք մի թուղթ և ես կգրեմ նրանց հասցեն:

Փոքրիկ թղթի վրա Էրենթուրգը գրեց.

Париж, 35, rue de Clechy

Paris

Pour Madame Helène Langevin

Հաջորդ օրն իսկ ես այդ հասցեով հինգ օրինակ ուղարկեցի Փարիզ:

Էրենթուրգը Մարտիրոս Սարյանի և մի շարք գրողների հետ եղավ Սևանում, Գեղարդում, Գառնիում, Զվարթնոցում, Էջմիածնում և Հուլաստանի շատ տեսարժան վայրերում:

Երբ ցանկացավ Մատենադարան գնալ եւ հաճույքով ուղեկցեցի նրան: Յնցող տպավորություն թողեց նրա վրա Մատենադարանը: Հայ հին ձեռագրերին նա նայում էր, որպէս երազած սրբությունների:

— Հազարավոր կիլոմետրեր կարելի է գալ միայն այս ձեռագրերը տեսնելու համար: Եւ աշխարհի շատ թանգարաններում եմ եղել, բայց հին ձեռագրերի այսպիսի հարուստ հավաքածո չէի տեսել:

Տպավորությունների գրքում Էրենբուրգը գրեց.

«Հիացած եմ հայ ժողովրդի մշակույթի վեհությունը ցույց տվող հին ձեռագրերի այս ամենահարուստ հավաքածուով: *Իլյա Էրենբուրգ: 8 սեպտեմբերի, 1959 թ.*»:

Էրենբուրգը ցանկություն էր հայտնել տեսնել Հայաստանի կոնյակի և գինու գործարանները: Այնպէս պատահեց, որ եւ նույնպէս մասնակից եղա այդ հետաքրքիր ճանապարհորդության: Նախ եղանք կոնյակի գործարանում: Նա այնպիսի հարցեր էր տալիս, որ գործարանի վարպետները կարծել են թէ նա նույնպէս կոնյակի մասնագետ է: Էրենբուրգը, իրավ, լավ գիտեր խմիչքների տեսակները, ֆրանսիական կոնյակը, գինիները, ինչպէս և իսպանական ու իտալական գինիները:

— 20-ական թվականներին, Մոսկվայում կար խմիչքների համաժողովան հանձնաժողով, եւ նրա հեղինակավոր անդամներից մեկն էի,— ասաց Էրենբուրգը ծիծաղելով:

Գործարանը դիտելուց հետո Էրենբուրգին հյուրասիրեցին հին ու նոր կոնյակներով: Նա չէր խմում, թեթեւ փորձում էր: Ամենից շատ հավանեց «Արմենիա» կոնյակը:

— Եւ այդ կոնյակից տարել էի Ծվեցիւս և այնտեղ անչափ հավանել էին, նրանց առևտրական պալատը պետք է հատուկ պատվեր տար Հայաստանին, այդ կոնյակից ստանալու համար:

Մեկնելու ժամանակ Էրենբուրգին նվիրեցին հայկական կոնյակների մի գեղեցիկ փունջ, հատուկ տուփի մեջ:

Այդտեղից մենք մեկնեցինք Օշակաւ: Էրենբուրգն ուզում էր տեսնել Խերեսի գործարանը: Ծանապարհին, զրույցի ժամանակ, նա ասաց, թէ ինքը զարմացած է, որ ոմանք կոնյակը խմում են ինչպէս գինի, մինչդեռ ընդունված է կոնյակը խմել ճաշից հետո, սուրճի ժամանակ:

— Սովորության հարց է,— ասացի ես:

— Թանկարժեք սովորություն է,— ասաց նա:

Խերեսի գործարանում Էրենբուրգն ավելի աշխուժացավ: Նա ճաշակեց Խերեսի խաղողը և երկար զրույց ունեցավ գործարանի գլխավոր վարպետի հետ:

— Խերես գինի եւ խմել եմ Իսպանիայում, հիշում եմ, այն հաճելի դառնություն ուներ, իսկ սա հաճելի քաղցրություն:

— Դա խաղողի քաղցրությունից է,— ասաց վարպետը:

— Ծատ լավ է, որ Հայաստանում պատրաստում եք «Խերես», սա մեծ պահանջ ու լայն ճանաչում կունենա:

Գործարանից դուրս եկանք: Փողոցով քայլելիս Էրենբուրգը դարձավ ինձ.

— Այս գլուղում կարելի՞ է տեսնել որևէ մեկի տունը, ինձ հետաքրքրում է նրանց նիստ ու կացը, թէ ինչպէս են ապրում:

— Իհարկե, կարելի է,— պատասխանեցի ես:

Փողոցի վրա, աջ կողմի տներից մեկի դուռը բաց էր: Երիտասարդ կինը երեխան գրկին կանգնած էր դռան մոտ: Եւ դիմեցի կնոջը՝ հայտնելով որ հյուրը ցանկանում է մտնել գլուղի տներից մեկը, կարելի է մի երկու րոպեով իրենց մոտ:

— Ինչու չէ, հայի տուն չէ, հայի տուն դուռը միշտ էլ բաց է հյուրի համար:

Ես բառացի թարգմանեցի կնոջ պատասխանը, և այն շատ դուր եկավ Էրենբուրգին, նա ժպտաց ու ասաց:

— Ես այդպես էլ գիտեի, ես շատ ես լսել ու կարդացել հայերի հյուրասիրության մասին:

Փոքր աստիճաններով բարձրացանք ու մտանք տուն: Ես շատ ուրախացա, որ բարեկարգ տուն էր, հավաքված, մաքուր: Ներսը մայելուց հետո դուրս եկանք պատըշգամբ, որտեղից բացվում էին Օշականի ձորն ու այգիները: Էրենբուրգը լուռ մայում էր դեպի դիմացի փոված կանաչ հեռուները:

Մինչ մենք պատշգամբից դիտում էինք Օշականի այգիները, տանտիրուհին արաբ հասցրեց սեղանի վրա դնել հաց, պանիր, գինի...

— Համեցեք, անուշ արեք,— դիմեց նա մեզ:

Մենք շնորհակալություն հայտնեցինք ու ուզեցինք գնալ: Կինը դժգոհեց.

— Ինչպես կարելի է, խնդրում եմ մատել:

Մենք մոտեցանք սեղանին, մի-մի բաժակ գինի խմեցինք, շնորհակալություն հայտնեցինք ու դուրս եկանք: Ծանապարհին Էրենբուրգն ինձ ասաց.

— Ինձ վիճակվել է տարբեր երկրներում լինել հայ ընտանիքներում, մատել գրուցել նրանց հետ, տեսել եմ նրանց միտ ու կացը և, գիտեք ինչ, միանգամայն տարբեր է նրանց ապրելաձևը: Երիտասարդ ժամանակ Կիևում ես եղել եմ հայ ընտանիքում, շատ լավ մարդիկ էին, արհեստավոր, բարի, հյուրասեր: Ապա 1926 թ. գրող Պավլենկոյի հետ Ստամբուլում ճաշել ենք մի հայ ընտանիքում: Տանտերը գիտեր ֆրանսերեն, աշխատում էր ինչ-որ առևտրական ընկերության գրասենյակում: Հիշում եմ, որ մենք մի առանձին ուշադրությամբ մայում էինք մեր շուրջը, ամեն ինչ հետաքրքիր էր, ես առաջին անգամ տեսա արևելյան իսկական հյուրասիրություն: Հետագայում Փարիզում, Մոսկվայում իմ հայ բարեկամների հետ մույնպես մոտիկից շփվել եմ, և Ձեզ պիտի ասեմ, միանգամայն տարբեր են դրանց միտ ու կացը, անգամ խոսակցության ինտոնացիան, ձևը:

— Բայց ինձ թվում է,— շարունակեց նա,— իսկական հայ ընտանիքը սա էր, որ տեսանք: Հավանորեն ժողովրդի բուն ազգային բնութագիրը իր հայրենիքում միայն կարելի է տեսնել ու հասկանալ: Դրսում ազգային առանձնահատկությունները շուտ են աղավաղվում, շրջապատն ազդում, ճնշում, փոխում է շատ բան: Ես հետաքրքրությամբ լսում էի Էրենբուրգին:

Օշականում Էրենբուրգին ցույց տվեցինք Մաշտոցի գերեզմանը: Նա ուշադիր մայեց, հարցեր տվեց Մաշտոցի կյանքի մասին: Երբ դուրս եկանք եկեղեցուց Էրենբուրգը հարցրեց.

— Ձեզ մոտ ընդունված է եկեղեցու ներսը մշահավոր մարդկանց թաղելը, թե միայն Մաշտոցի համար է արված այդ բացառությունը:

— Ոչ, կան և ուրիշները, կաթողիկոսներ, գորավարներ:

Էրենբուրգն ասաց, որ այդ սովորությունը կա նաև Եվրոպայում: Նշեց մի շարք մշահավոր մարդկանց, որոնք մույնպես թաղված են եկեղեցու ներսը: Թվարկած անուններից հիշում եմ միայն լեհ մեծ գրող Հենրիկ Սենկևիչին:

Նայելով եկեղեցու մամռածածկ պատերին՝ Էրենբուրգն ասաց.

— Ինչքան հարուստ է փոքրիկ Հայաստանը իր անմահ հուշարձաններով:

— Ավելի շատ հուշարձաններ կան Արևմտյան Հայաստանում:

— Մի՞թե:

— Այո, անհամեմատ հարուստ:

Օշականից գնացինք Էջմիածին, ապա՝ Փարաքարի գինու գործարան: Այստեղ

Էրենբուրգին ցույց տվեցին Սասերավի գինու տեսակները: Նա շատ հավանաց և հարցրեց, թե որ ժամանակից է Սասերավի խաղողը Հայաստանում աճում, ովքեր են բերել այն:

Գործարանի աշխատակիցները պատմում էին, ով ինչպես գիտեր:

Հավանորեն նախապես ծրագրված էր հենց այդ գործարանում ճաշկերույթ տալ Էրենբուրգի պատվին: Իսկապես լավ սեղան էին բացել: Խորովածից բացի ուրիշ համով ուտելիքներ շատ կային: Համարյա բոլոր կենացներն Էրենբուրգի ու տիկնոջ մասին էին:

Սննդի միմիատրության պաշտոնական ներկայացուցիչը, որ այդ օրը եկել էր Էրենբուրգին ծանոթացնելու Հայաստանի գինիների հետ, նույնպես բաժակ բարձրացրեց.

— Ձեզ, ընկեր Էրենբուրգ,— ասաց նա,— լավ ճանաչում են Հայաստանում ու սիրում: Ձեր գործերը, հատկապես պատերազմի տարիների երկերը հայտնի են բոլորին:

Ընդհանուր դուրս եկանք այգում զբոսնելու:

Այդ օրը, այդ գեղեցիկ այգում երկար զրուցեցինք Էրենբուրգի հետ՝ գրականության, արվեստի, քաղաքականության մասին: Իմ մեջ խոր տպավորություն թողեց Էրենբուրգի զրույցը հայ պոեզիայի մասին: Նա գիտեր մեր բոլոր նշանավոր բանաստեղծներին, նրանց երկերը: Բոլորսովի «Հայաստանի պոեզիան» ոչ միայն կարդացել, այլև ուսումնասիրել էր:

— Ես միշտ սիրել եմ հայ բանաստեղծությունը,— ասաց նա,— ես այն համարում եմ ամբողջ մարդկության մեծ պոեզիան՝ սկսած հնագույն էպոսից, մինչև մեր օրերի բանաստեղծները: Այդել կարելի է, այդպիսի փոքր ժողովուրդ և այդպիսի մեծ բանաստեղծներ՝ Սայաթ-Նովա, Թումանյան, Իսահակյան, Չարենց...

Էրենբուրգը մի առանձին հիացմունքով էր խոսում Իսահակյանի մասին: «Աբու Լալա Մահարին» նա համարում էր համաշխարհային պոեզիայի մեծագույն նվաճումներից մեկը:

— Իրեն, Իսահակյանի հետ,— ասաց Էրենբուրգը,— ես ուշ ծանոթացա, 1941 թ. Մոսկվայում, հայ պոեզիայի երեկոյին: Ֆադեևը մեզ ծանոթացրեց: Մենք խոսում էինք ֆրանսերեն և վեր զրույցի զգալի մասը Ֆրանսիայի մասին էր: Ծատուցը ձեռքով հարցրեց՝ ծանոթ եմ իր գործերին: Ես ասացի՝ կարդացել եմ «Աբու Լալա Մահարին» ֆրանսերեն: Ամբողջ զրույցի ժամանակ ես հիացած նայում էի նրա դեմքին և կարծես դարերի իմաստություն, թախիծ ու վիշտ արտահայտող մի մոնումենտ էր այն:

Ես ասացի, որ Իսահակյանի մահվան առթիվ նրա ուղարկած ցավակցական հեռագիրը մեծ տպավորություն էր թողել հայ մտավորականության վրա*:

— Ես չէի պատկերացնում, որ կարող եմ գալ Հայաստան, տեսնել Արարատը, Սևանը, Գառնին և չտեսնել Իսահակյանին:

* Այդ հեռագիրը ես թերթից կտրել ու պահում էի: Ահա այն.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

19 հոկտեմբերի 1957 թ.

Բանաստեղծ Իսահակյանը պատկանում է այն բանաստեղծների շարքին, որոնք հազվադեպ են ծնվում: Նրանով հպարտանալու իրավունք ունի յուրաքանչյուր, նույնիսկ ամենահարուստ գրականությունը: Նրա պոեզիան մի քանի տասնամյակների ընթացքում օգնել է ինձ ապրել: Ես համոզված եմ, որ նա կապրի դարեր ու դարեր:

Իլյա էրենբուրգ:

Ես լսում էի Էրեմբուրգին լարված ուշադրությամբ: Քիչ են պատահում մարդու կյանքում այդպիսի երջանիկ պահեր:

Էրեմբուրգը դժգոհեց, որ մենք մեր գրականությունը, մեր մշակույթը վատ ենք ներկայացնում օտարներին: Թարգմանությունները քիչ են: Պատմեց, թե ժամանակի ռուս մտավորականության վրա ինչպիսի ուժեղ տպավորություն են գործել Բալմոնտի, Բրյուսովի, Վլաշենսկի Իվանովի թարգմանությունները: Պատմեց, թե ինչպես Փարիզում նա լսել է Թումանյանի «Ախթամարը», իր իսկ՝ Բալմոնտի արտասանությամբ:

Երևանից մեկնելու նախօրյակին ես գնացի հյուրանոց՝ Էրեմբուրգին ու տիկնոջը ցտեսություն հայտնելու: Սենյակում կային ուրիշ հյուրեր ևս: Այնտեղ էր Հայաստանի հեռագրական գործակալության ներկայացուցիչը: Մեզ բոլորիս շատ ուրախացրեց, որ Էրեմբուրգը հարուստ ու լավ տպավորություններով էր մեկնում Հայաստանից:

— Ես ցավում եմ,— ասաց նա,— որ Հայաստանն առաջին անգամ եմ տեսնում: Ի դեպ, գուցե այդ ևս ունի իր լավ կողմը. Ասում են, թե առաջին սերն ամենաուժեղն է լինում, թերևս, բայց ոչ ամենախելոքը: Կյանքիդ վերջին ավելի լավ ես տեսնում ամեն ինչ, ավելի լավ ես հասկանում:

Դժվար է մի քանի խոսքով պատմել այն մեծ հայտնությունների մասին, որ բացվեցին ինձ համար Հայաստանում: Ես Հայաստանի մասին շատ բան գիտեի, ես ծանոթ էի Հայաստանին, բայց այդ ամենը որոշ շրջանակների մեջ էր: Ես տեսա Հայաստանում անսովոր մի հին արվեստ, որ ինձ ցնցեց, ես տեսա մի երկիր, ուր պետք է մտնել գլխաբաց և, ինչպես Մապոնիայում, կոշիկները հանած, այնպես, ինչպես Հնդկաստանում տաճար են մտնում: Այդպես է ամբողջ Հայաստան երկիրը, նրա յուրաքանչյուր մասնիկն անսովոր կերպով հին է և իմաստուն:

Մեզ սուրճ բերեցին, կոնյակ: Էրեմբուրգը դանդաղ խմում էր սուրճը, ծխում:

— Բայց Ձեզ պիտի ասեմ,— շարունակեց նա,— որ Հայաստանում ամենից շատ ինձ գերեցին մարդիկ: Թեպետ ես շատ եմ սիրում արվեստը, բայց արվեստից ավելի ինձ դուր եկան մարդիկ: Թեպետ ես կյանքում շատ հայ բարեկամներ եմ ունեցել, բայց այստեղ ես տեսա հայ ժողովրդին, մոտիկից մերձեցա նրա կենցաղին, և նա ինձ գերեց իր մարդկայնությամբ, իր իմաստությամբ, բարությամբ, ոգեշնչությամբ և միաժամանակ իր զսպվածությամբ, իր ներքին մեծ կրքոտությամբ: Հայ ժողովուրդը մեծ պատմություն ունի իր թիկունքի ետևում: Ամեն մի մարդ ունենում է վիշտ, վիշտն էլ հաճախ զարդարում է մարդուն, ճիշտ չէ, որ միայն ուրախությունն է զարդարում մարդուն: Այն ժողովուրդը, որը շատ փորձություններ է տեսել, հոգեպես ավելի ուժեղ է, նա հոգեկան հմայք ունի: Սա մեծ ժողովուրդ է: Ես երջանիկ եմ, որ եղա Հայաստանում:

Բոլորիս վրա խոր տպավորություն թողեցին Էրեմբուրգի խոսքերը: Այդ նույնը նա ասաց ռադիոյով և հեռուստատեսությամբ ունեցած ելույթի ժամանակ:

Ուշ ժամ էր, երբ մենք բարձր տրամադրությամբ դուրս եկանք Էրեմբուրգի մոտից:

Մոսկվայում, 1967 թ. սեպտեմբերի մեկին, երեկոյան ինձ զանգեց ռուս ընկերներիցս մեկն ու ասաց.

— Գիտես, սիրելիս, Էրեմբուրգը մահացել է:

Այդ բոթն ինձ ցնցեց:

— Էրեմբուրգը մահացել է,— հայտնեց ռադիոն, վերջին լուրերի հաղորդման ժամանակ:

Իս գնացի թաղման: Աչքերիս չէի հավատում, որ մեր վերջին հանդիպումից հետո, ես նրան պիտի տեսնեի դադարում:

Աշխարհի բոլոր ծայրերից ցավակցական հեռագրեր էին ստացվել: Հեռագրեր էին ուղարկել մեծանուն գրողները, արվեստագետները, պետական, կուսակցական պատասխանատու գործիչները, պարզ ու հասարակ մարդիկ:

Ամենքն էլ նշում էին, որ մահացել է մեծ գրողը, մեծ քաղաքացին, մեծ մարդը. ժողովուրդների խաղաղության ու բարեկամության խիզախ մարտիկը:

Սովետական Հայաստանի թերթերը ըստ արժանվույն արձագանքել են այդ մեծ կորստին: Ինձ վրա հուզիչ տպավորություն թողեց, որ սփյուռքահայությունը նույնպես լայնորեն նշել է մեծ գրողի կորուստը: Բեյրութում հրատարակվող «Էջեր գրականության և արվեստի» ամսագրի հերթական համարում տպագրված էր մահախոսական՝ Էրենբուրգի մասին և Պիկասոյի Էրենբուրգի մատիտանկարը:

Այդ մահախոսականում ասված էր.

«Իլիա Էրենբուրկ ոչ ես է:

Այս լուրը հուզումով վարակեց ոչ միայն սովետական հասարակությունը և բոլոր երկրներու շրջանակները, այլև տասնյակ միլիոնավոր, հարյուր միլիոնավոր ընթերցողներ ամբողջ աշխարհի մեջ: Որովհետև Էրենբուրկ այն քչերեն մեկն էր, որ դարձած էր պիլեի անուն մը լայն զանգուածներուն համար, անուն մը՝ որ խորհրդանշում էր մեծատաղանդ գրողին, բոցաշունչ հրապարակագիրին ու խաղաղության նուիրեալ մարտիկին:

Մեծատաղանդ գրողը— իր ծավալուն և մեծարժեք վեպերով, «Փարիզի անկոմով», «Փոթորիկով» կամ «Սառցահալով», որոնք գեղարվեստական պատաստումն են ամբողջ ժամանակաշրջանի մը և կհանդիսանան մնայուն ներդրում մը համաշխարհային գրականության մեջ:

Բոցաշունչ հրապարակագիրը— իր բազմահարյուր, բազմահազար հոդվածներով, որոնք կատարելություն են իրենց սեռին մեջ և կընկատվին գեղարվեստական մնայուն վավերաթուղթեր: Եվ ըսված է իրավամբ՝ թե Բ. Աշխարհամարտի օրերուն, Էրենբուրկի հոդվածները կատարած են զորաբաժանի մը դերը և սովետական յուրաքանչյուր զինվոր այդ հոդվածները պահպանած է մասունքի նման: Խաղաղության նուիրեալ մարտիկը— իր խոսքով, իր գրչով, իր գործունեությամբ, որոնք բոլորն էլ անսակարկորեն դրված են խաղաղության սրբազան դատի ծառայության մեջ»:

Մենք գիտակցորեն այս մեջբերումը կատարեցինք, քանի որ դրա մեջ ավելի ցայտուն, ավելի հստակ նկույն են արտահայտված սփյուռքահայության սերն ու վիշտը Էրենբուրգ գրողի, քաղաքացու ու նրա կորստի նկատմամբ:

Հայ ժողովուրդը մեծ ու ազնիվ բարեկամներ շատ է ունեցել՝ Անատոլ Ֆրանս, Ռոմեն Ռոլան, Հանրի Բարբյուս, Վալերի Բրյուսով, Մաքսիմ Գորկի և շատ ուրիշներ:

Իլյա Էրենբուրգը մեր ժողովրդի համար եղել և միշտ կմնա այդ պայծառ, այդ անմահ անունների շարքում: